

ՅԵՒԵԼՈՒԵՐ



ՅԵՍՈՒՆ ՈՒ ՀԻՆԳ ԵՐՐՈՐԴ ԹԻՈՅՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լեցեալները Եփեսոսի լրագրին մէջ գրեալ էր թէ Պէկոյու գտնուած քրիստոնէից գերեզմանատան ընդարձակ երկիրը կայսերական տէրութեան կողմէն պիտի առնուի և տեղը ուրիշ երկիր պիտի շնորհուի։ Եւ լրագրը առանց սահմանի գրեալ ըլլալուն համար՝ ոմանց մէջ կերպ կերպ առարկութեանց պատճառ եղած էր, որոնց առաջը առնելու մտքը՝ կը փութամբ այսօր ներկայ յաւելուածովս յարգոյ հասարակութեան հաղորդելու բարձրագոյն դրան կողմէն օտար տէրութեանց դեսպաններուն այս առարկային վրայօք գրեալ պաշտօնական նամակին թարգմանութիւնը։

« Պէկոյուի կայսերական ձմեռանոցին զինացը բողոքական և կաթոլիկ ազգաց ու հալէպցի քրիստոնեաներէն կոստանդնուպոլիս գտնուողներուն մեռելոցը յատկացեալ գերեզմանատունը ոտքի տակ տեղ մը ըլլալէն զատ՝ միայն տաան հազար կանգուն տարածութիւն նոյն նեղ ու պղտիկ ըլլալուն համար բաւական չը համարուելով, վեհափառ կայսեր ամեն կարգի ժողովոյց վրայ ունեցած կատարեալ գթասրտութեանը համեմատ՝ կայսերական ուսումնարանին զինացը արուեստական բարեպաշտուէն ընկերութեան (օսիրտ տը լասսօսիասիօն տը փիլէթէ արթիզան) անկեղնոցին մօտ գտնուած քառասուն երեք հազար այս չափ քառակուսի կանգուն տարածութիւն ունեցող երկիրը՝ Նորին կայսերական մեծութեան կողմէն նշանակուեցաւ որ վերջիշեալ ժողովոյց գերեզմանատունը ըլլայ և հին գերեզմանատան մէջ ունեցած բաժնիներուն համեմատութիւն մէջնին բաժնուի։ Եւ պատճառաւ առաջին գերեզմանատան մէջ արդէն թաղուած մեռելներուն նոր շնորհուած երկրին մէջ բերելու հարկաւորելով, կարելի եղածները հիմակուց և քիչ մը ուշացնելով պէտք եկածները կամաց կամաց փոխադրելու համար՝ երեք տարի պայմանաժամ նշանակուած է, որուն մինչև վերջնապէս յիշեալ տեղը գտնուած մեռելները նոր գերեզմանատունը բերել պիտի հարկաւորի, և նոյն պայմանաժամը լրանալէն ետքը՝ յիշեալ երկիրը հասարակութեան համար իբր գրօսանաց տեղի մնալու է։ Եւ տնօրէնութիւնը ջեղ իմացընելու առիթով մեր յատուկ սիրոյ հաւաստիքը կը կրկնեմք։ »

Օտար տէրութեանց դեսպանները կայսերական կառավարութիւն այս տնօրէնութիւնը իմանալուն պէս՝ վեհափառ Սուլթանին շնորհակալ եղան իւր ազատամիտ կրօնական թշուառութեանը համար և իրարու հետ խորհրդակցեցան այս առարկային վրայօք։

— Նոր հաստատութիւն Պանքային Իրաւէին (հրամանին որ Ն 13 մարտի) համեմատ՝ երեկ կայսերական հրովարտաւ կը ելաւ, որով բողոքողին վերջացան այն անհիմն լուրերը, որ այս բազմօգուտ հաստատութեան գործադրութեանը վրայօք կասկածներ տարւաւ մտքը կը տարածուէին։

— կայսերական նաւատորմը որ ձըմեռուան եղանակը Արքուշի նաւարանը անցուց, նորէն պատրաստուեցաւ և քիչ օրէն դուրս կ'ելլէ կոստանդնուպոլսոյ Նեղոցի մէջ իւր սովորական տեղը կարգաւ խարսխելու համար։

Յիշեալ նաւախումբը հետեւեալ նաւերէն կը բաղկանայ։

Եռայարկ	Մահմա-պէ
"	Խէս-պէ
Երկայարկ	Փէյ-ի Մէ-էրէ-ի
"	Նոս-ի-ի-ի
Յիշեալ	Նիւ-ի-ի
"	Շահապ
"	Նաւ-ի-ի Պահ-ի
"	Մի-ի-ի
"	Փաւ-ի-ի
"	Ան-ի-ի
"	Փէյ-ի Մահմա-պէ
Գործիք	Մի-ի-ի Փէրահ
"	Նէ-ի-ի Փէր
Պրէք	Սի-ի-ի Պահ-ի
"	Փէյ-ի Պի-ի-ի
Սըռնէր	Սէյ-ի-ի
"	Նէ-ի-ի
Քօլէտ	Քահ-ի-ի
Պոռուտիւր շոգ	Մի-ի-ի Մի-ի-ի
Անուաւոր շոգ	Մի-ի-ի
"	Լի-ի-ի Շէ-ի-ի

— Լմերիկայի Միացեալ Նահանգաց կառավարութիւնը իմացած ըլլալով որ վեհափառ Սուլթանը իւր շոգեւաւորէն մէկը՝ Նիւ-ի-ի պիտի զրկէ մայիս կամ յունիս ամսոյ մէջ բացուելիք տիեզերական մթնոլորտին համար, ծերական կոյտը և պատգամաւորաց խորհրդարանը փետրվարի 26ին վճռեցին որ հինգ հարիւր հազար օսմանեան դահեկան պատրաստուի Օսմանեան շոգեւաւորէն պաշտօնէից ամերիկայի նախարարաց կողմէն ըլլալիք հիւրընկալութեան ծախուց համար։

Սիւսեալ Նահանգաց խորհրդարանը որ տէրութեան գրամոյց համար միշտ խնայողութիւն կը ցուցնէ, այս գործովը յայտնապէս կը վկայէ թէ Նորին Ազատեան մեծութեան վեհաճան և մարդասէր բնաւորութիւնը մեծ համարման և համակրութեան զգացմունք ազդած է Լմերիկայի ժողովրդեան։

— Վիեննայէն մարտի 22ին հեռագրական միջոցաւ զրկուած լուրերուն նայելով՝ Մոսկէօ տը Պրուքի Աւստրիոյ տէրութեան կողմէն կոստանդնուպոլսոյ դեսպան զրկուելուն լուրը հաստատուի կը գտնայ։

— Վաղղիոյ տէրութեան մեծ դեսպան Մոսկէօ տը լա-Քուրը շարաթ օր Բարձրագոյն դուռը գալով, բարձրաստիւ մեծ Եպարքոսին արտաքին գործոց նախարար վեհափայլ Ռիֆաթ փաշային և արդարութեան Բարձրագոյն Ատեանին նախագահ վեհափայլ Մուսթաֆա փաշային այցելութիւն ըրաւ, և մեծ սիրոյ և պատուոյ նշաններով ընդունելութիւն գտաւ։

— Վաղղիոց Միջերկրական ծովու նաւախումբը հրամանատարութեամբ Պարոն տը լա Սիւսի Սալամինա հասեր է։

Յիշեալ նաւախումբը հետեւեալ նաւերէ կը բաղկանայ վեհափառ Փէր 120 թնդանօթ, Վալի 110 թնդանօթ, Մոն-Բէ-ի-ի 120 թնդանօթ, Շահ-ի-ի 100 թնդանօթ, Պէյ-ի 90 թնդանօթ, Ժի-ի-ի 86 թնդանօթ, Նաւ-ի-ի 90 թնդանօթ, Շահ-ի-ի 90 թնդանօթ, Մոն-Բէ-ի-ի 650 ձիու յոժ, Մահ-ի-ի 450 ձիու յոժ, Սահ-ի-ի 450 ձիու յոժ, Քահ-ի-ի 260 ձիու յոժ, Վի-ի-ի վեց նաւը շոգեւաւոր են։ Եւ նաւախումբը Արեւելեան ծովը եկած ատենը Ռօմէն Տեֆօստե ծովագետի տեղակալին հրամանին տակը գտնուած նաւերուն հետ պիտի միանայ, որ ասոնք են Սի-ի-ի 450 յոժ Շահ-ի-ի 220 ձիու յոժ, Տէր-ի-ի 200 ձիու յոժ, Նաւ-ի-ի 160 ձիու յոժ, Սահ-ի-ի 120 ձիու յոժ։

— Վիեննայի Միջերկրական ծովու նաւախումբը որ մարտի 23ին Մալթա կը գտնուէր, հետեւեալ նաւերէն բաղկացեալ է։

Պի-ի-ի 120 թնդանօթ՝ հրամանատարի գրօնակով, Թի-ի-ի 120 թնդանօթ, Ան-ի-ի 90 թնդանօթ, Ռօ-ի-ի 92 թնդանօթ, Պի-ի-ի 78 թնդանօթ, Ան-ի-ի 50 թնդանօթ, Մոն-Բէ-ի-ի 18 թնդանօթ, Սահ-ի-ի 6 թնդանօթ, Ռի-ի-ի 6 թնդանօթ, Ռօ-ի-ի 14 թնդանօթ, Նաւ-ի-ի 8 թնդանօթ, Օպի-ի-ի, Ար-ի-ի և Սի-ի-ի 7ը հատը շոգեւաւոր են։

— Սոսերս վիեննայէն Պօլիս և Պօլիսէ վիեննա բանելու շոգեւաւոր երթեկութեան գիծ մը պիտի հաստատուի, որով եօթը օրուան մէջ վիեննայէն Պօլիս և ինն օրուան մէջ Պօլիսէն վիեննա պիտի երթըցուի։